Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական մասում փոփոխություններ կատարելու մասին

Մասիս քաղաքային համայնքի 2020 թ. բյուջեի վարչական մասի եկամուտներում և ծախսերում անհրաժեշտություն է առաջացել կատարել փոփոխություններ.

Նկատի ունենալով, որ համայնքում մանկապարտեզները՝ կորոնավիրուսային համավարակի հետ կապված աշխատել են հեռավար, այնուհետև երեխաների թերբեռնված հաճախումներով, իսկ 2020 թվականի հոկտեմբերի 7-ից մինչև նոյեմբերի 18-ը դադարեցրել են ծառայությունների մատուցումը, ծախսերը որոշակի չափով կրճատվել են և անհրաժեշտություն է առաջացել նվազեցնել նախադպրոցական կրթության ոլորտում ծառայությունների դիմաց ծնողական վճարներից եկամուտները և սուբսիդիաների վճարման չափերը:

Առաջարկվում է ծնողական վճարներից նախատեսված եկամուտները նվազեցնել ըստ մանկապարտեզների՝

1. Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ 4 900 000 դրամ
2. Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ 8 500 000 դրամ
3. Թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ 8 800 000 դրամ
4. Թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ 7 300 000 դրամ
5. Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ 8 500 000 դրամ
6. Թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ 2 200 000 դրամ:

Ծախսային մասում հատկացվող սուբսիդիաների չափերը նվազեցնել ըստ մանկապարտեզների՝

1.Թիվ 1 մանկապարտեզ ՀՈԱԿ 6 200 000 դրամ
2.Թիվ 2 մանկապարտեզ ՀՈԱԿ 7 800 000 դրամ
3.Թիվ 3 մանկապարտեզ ՀՈԱԿ 6 500 000 դրամ
4.Թիվ 4 մանկապարտեզ ՀՈԱԿ 5 300 000 դրամ
5.Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ 10 000 000 դրամ
6.Թիվ 7 մանկապարտեզ ՀՈԱԿ 1 200 000 դրամ:

Նույն խնդիրների հետ կապված գրադարանների և արտադպրոցական ծառայությունների գծով որոշակի ծախսեր չեն կատարվել և առաջացել է տնտեսում համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին հատկացվող սուբսիդիայի մասով: Առաջարկվում է նվազեցնել բյուջեի ծախսային մասում նախատեսված սուբսիդիաները ըստ արտադպրոցական ՀՈԱԿ-ների.

1. Ա. Նազարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոց ՀՈԱԿ- 1 700 000 դրամ
2. Մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՀՈԱԿ - 2 400 000 դրամ

3. Ա. Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոց ՀՈԱԿ - 1 000 000 դրամ
4. Գեղարվեստի դպրոց ՀՈԱԿ - 300 000 դրամ:

Քաղաքային կենտրոնական գրադարան ՀՈԱԿ-ի համար նախատեսված սուբսիդիայի չափը նվազեցնել 1 100 000 դրամի չափով:

Երկրում կորոնավիրուսային համավարակի և արտակարգ դրությամբ պայմանավորված որոշակի իրավաբանական անձինք դադարեցրել են իրենց գործունեությունը, որի արդյունքում բյուջեում նվազել են գույքի վարձակալությունից մուտքերը, ինչպես նաև տեղական տուրքերի և տեղական վճարների մասով եկամտատեսակներից գանձումները:

Առաջարկվում է վարչական բյուջեի եկամտային մասում նվազեցնել եկամուտները ըստ եկամտատեսակների.

1. Տեղական վճարներ աղբահանության ծառայություններից՝ 1 836 000 դրամ
2. Տեղական վճարներ անասնաբույժի ծառայություններից՝ 162 000 դրամ
3. Մուտքեր այլ գույքի վարձակալությունից /Երաժշտական դպրոցի դահլիճի վարձակալության մասով/՝ 146 900 դրամ
4. Տեղական տուրքեր արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար՝ 286 600 դրամ
5. Տեղական տուրքեր հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար՝ 320 000 դրամ
6. Տեղական տուրքեր ոգելից և ալկոհոլային խմիչքների , ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ 446 000 դրամ:

Որոշակի եկամտատեսակների մասով 2020 թվականի բյուջեով նախատեսվածից ավելի են կատարվել և փոփոխման ենթակա են առաջադրանքները՝ մասնավորապես.

1.Տեղական տուրքեր համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության թույլտվության համար՝ 790 000 դրամ,

2.Տեղական վճարներ համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ 690 000 դրամ,

3.Առանց պետական տուրքի գանձման մատուցվող ծառայություններից՝ բնակչության հատուկ սպասարկման ծառայություններից մուտքերի մասով՝ 1 115 000 դրամ,

4.Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարները՝ 1 062 000 դրամ,

5.Վարչական իրավախախտումների համար պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտները՝ 2 528 000 դրամ:

Անհրաժեշտություն է առաջացել համայնքի 2020 թվականի բյուջեի վարչական մասի ծախսերում կատարել որոշակի փոփոխություններ՝ նվազեցումներ և ավելացումներ:

Բյուջեի վարչական մասի ծախսերից փողոցների լուսավորության էներգետիկ ծախսերում առաջացել է խնայողություն, որի համար նախատեսված միջոցները առաջարկվում է նվազեցնել 1 200 000 դրամի չափով:

Երկրում ռազմական դրության հետ կապված Արցախից մեր համայնքում ապաստանած անձանց կամավորների կողմից ցուցաբերված ակտիվ մասնակցության համար առաջարկվում է բյուջեից հատկացնել դրամական միջոցներ 11 մասնակցի խրախուսելու համար՝ 250 000 դրամ, պատվոգրեր, շնորհակալագրեր պատվիրելու և հանձնելու համար՝ 18 000 դրամ:

«Առաքելություն Հայաստան» ՀԿ-ի բարեգործական ճաշարանի կողմից համայնքի սոցիալապես անապահով անձանց մատուցած ծառայությունների համար բյուջեում նախատեսվել է նվիրատվություն 1 200 000 դրամի չափով, սակայն հաշվի առնելով, որ համավարակի պայմաններում և ժամանակահատվածում հասարակական կազմակերպությունը շահառուներին սնունդը առաքելու միջոցով ապահովել է նախատեսված սննդի չափաժիններով և համաձայնագրով նախատեսվել է միջոցներ հատկացնել 2 400 000 դրամի չափով, անհրաժեշտ է բյուջեից լրացուցիչ հատկացնել 1 200 000 դրամ:

Հաշվի առնելով, որ 2020 թվականի ընթացքում կորոնավիրուսային համավարակով և ռազմական դրությամբ պայմանավորված քաղաքապետարանի ողջ անձնակազմը աշխատել է ծանրաբեռնված, հաճախ առանց հանգստի ժամի և հանգստյան օրերի, ուստի առաջարկվում է, տարեվերջին աշխատողներին խրախուսելու նպատակով, նախատեսել և բյուջեից հատկացնել լրացուցիչ միջոցներ միանվագ դրամական պարգևատրում տալու համար՝ 5 700 000 դրամի չափով:

Բյուջեում կատարված փոփոխությունների արդյունքում առաջարկվում է վարչական մասի պահուստային ֆոնդը ավելացնել եկամտային և ծախսային մասերի նվազեցումների և ավելացումների տարբերության արդյունքի չափով՝ 319 500 դրամ:

Բյուջեում կատարված փոփոխությունների արդյունքում վարչական մասի եկամուտները և ծախսերը կնվազեն ընդհանուր 37 212 500 դրամի չափով:

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ՝ Ն. Սահակյան